

ՃՎԱՐԱՆԻ ՉՎՐՈՐԿ ՈՒՌՈՒՑՔՈՎ ՀԻՎԱՆՂՆԵՐԻ ԲՋՁԱ- ՀԻՍՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԿՈՐԵԼԱՑԻԱ

Բաբլոյան Ս.Ռ.

Երևանի պետական բժշկական համալսարանի գինեկոլոգիայի և մանկաբարձության
թիվ 1 ամբիոն, ՀՀ, Երևան
,Էրեբունիե բժշկական կենտրոն, ՀՀ, Երևան

Ինչպես հայտնի է ձվարանի Էպիթելային քաղցկեղով հիվանդների 2/3-ը բացահայտվում են հիվանդության զարգացման ուշ փուլերում, քանի որ վաղ փուլերում բացակայում են կլինիկական ախտանիշները: Ազատ որովայնային հեղուկի, ասցիտիկ հեղուկի և որովայնի լվացման հեղուկների բջջաբանական քննությունը հանդիսանում է ընդունված մեթոդ՝ ձվարանի Էպիթելային քաղցկեղով հիվանդների հետազոտման համար: Ներկայացված աշխատանքում քննարկվում է ձվարանի չարորակ Էպիթելային ուռուցքով հիվանդների ախտորոշման բջջա-հիստոլոգիական կորելացիան եւ նոր Thin Prep բջջաբանական քննության դերը՝ որպես համարժեք հիստոլոգիական հետազոտման և ախտորոշման մեթոդ:

Հետազոտման են ենթարկվել ձվարանի չարորակ ուռուցքներով 110 կին. 105 հիվանդ կանանցից ստացված որովայնային հեղուկը հետազոտվել է ThinPrep բջջաբանական մեթոդով, իսկ 5 կնոջից ստացված հեղուկ դիտվել է անբավարար: Մասնավորապես մեր աշխատանքում բջջաբանական հետազոտության են ենթարկվել ThinPrep եղանակով ասցիտիկ հեղուկը, ազատ որովայնային հեղուկը և որովայնի լվացման հեղուկը, որոնք վերցվել են հետազոտման վիրահատությունից առաջ կամ ընթացքում: Բոլոր ստացած բջջաբանական պատասխանները համեմատվել են հիստոլոգիական ախտորոշման հետ: Համաձայն ստացած պատասխանների, ThinPrep բջջաբանական հետազոտության արդյունքները հիստոլոգիական ախտորոշման հետ ենթարկվում են դրական կորելացիայի, մինևույն ժամանակ ThinPrep-ը հանդիսանում է մեթոդ, որն իր ճշգրտությամբ համարժեք է հիստոլոգիականին, օգնում է վաղ ախտորոշմանը և լրացուցիչ կանխատեսման գործոնների բացահայտմանը, ինչը մասնավորապես կարևոր է հիվանդի բուժման մեթոդն ընտրելու համար: